Կ-829-23.04.2024-ՏՀ-011 *Երկրորդ ընթերցում*

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «գաղտնի» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին կետով նախատեսված տեղեկատվության» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.

«4.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված, ինչպես նաև 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններին առնչվող սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկատվությունը ոչ գաղտնի է և ենթակա է տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգով:»,

3) 5-րդ մասի «դ» կետի «սահմաններում» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.

«ե) հարկային մարմնին՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակներում օգտագործելու նպատակով: Լիցենզավորված անձինք սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունների շրջանակում հարկային մարմնին իրավասու են բացահայտելու նաեւ

սպառողներին նույնականացնող տվյալները: Սույն կետով նախատեսված տեղեկատվության ցանկը եւ տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ի հոդվածով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-829-23.04.2024-ՏՀ-011/1 *Երկրորդ~~Առաջին~~ ընթերցում*

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի 20-րդ ~~հոդվածի 5-րդ մասում~~հոդվածում՝

3) 4-րդ մասում «գաղտնի» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին կետով նախատեսված տեղեկատվության» բառերը,
4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.
«4.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված, ինչպես նաև 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններին առնչվող սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկատվությունը ոչ գաղտնի է և ենթակա է տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգով:»,

~~1~~3) 5-րդ մասի «դ» կետի «սահմաններում» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

~~2~~4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~նոր~~ «ե» կետով~~՝ հետեւյալ բովանդակությամբ~~.

«ե) հարկային մարմնին՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակներում օգտագործելու նպատակով: Լիցենզավորված անձինք սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունների շրջանակում հարկային մարմնին իրավասու են բացահայտելու նաեւ սպառողներին նույնականացնող տվյալները: Սույն կետով նախատեսված տեղեկատվության ցանկը եւ տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի 1-ի հոդվածով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-829-23.04.2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-829[1]-23.04.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«էներգետիկայի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է իր սպառողների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների, ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվությունը համարել և պահել գաղտնի: Նույն հոդվածի 5-րդ մասում սահմանված	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «հրապարակային» բառի	Ընդունվել է:

			են այն դեպքերը, երբ լիցենզավորված անձինք իրավասու են բացահայտելու վերոնշյալ տեղեկությունները: «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հիշյալ դեպքերի շարքին լրացվում է նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հարկային հսկողության շրջանակներում օգտագործելու նպատակով հարկային մարմնին այդ տեղեկությունների բացահայտումը: «էներգետիկայի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված կարգավորումն ուղղված է սպառողների տվյալների պաշտպանությանը, ըստ էության որոշ դեպքերում որպես անձնական տվյալներ (ֆիզիկական անձանց դեպքում), իսկ որոշ դեպքերում՝ հնարավոր առևտրային գաղտնիք (իրավաբանական անձանց դեպքում) համարվելու տեսանկյունից: Մինչդեռ որոշ սպառողների, օրինակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական ու համայնքային կազմակերպությունների դեպքում հիշյալ տվյալների պաշտպանությունը վերջիններիս արդյունավետ գործունեության ապահովման համատեքստում, ըստ էության, չունի էական նշանակություն, ընդհակառակը, այն հակադրվում է հանրության համար վերջիններիս գործունեության թափանցիկության ապահովման և	ներքո նկատի է առնվում տեղեկատվության ոչ գաղտնի լինելը, որը նշանակում է, որ տեղեկատվությունն տնօրինողը ի սկզբանե իր նախաձեռնությամբ այդ տեղեկատվությունը հրապարակելու պարտավորություն չունի և տեղեկատվությունն այլ անձանց տրամադրում է միայն վերջիններիս կողմից համապատասխան գործողություններ կատարելու	

			հաշվետվողականության բարձրացման սկզբունքներին: Մասնավորապես, բաց գործելակերպն ու հաշվետվողականությունը համարվում են լավ ժողովրդավարական կառավարման հիմնարար սկզբունքներ: Հանրության համար բոլոր հնարավոր մակարդակներում պետք է ապահովել տեղեկատվության մատչելիություն և նպաստել կառավարման գործընթացների վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացմանը, ինչին էլ մեծապես ուղղված է տեղեկատվության ազատության բնագավառում թե միջազգային լավագույն փորձը, թե հատկապես վերջին տասնամյակում երկրի վարած քաղաքականությունը: Բացի այդ, գործնականում լինում են իրավիճակներ, երբ հենց պետական մարմինների առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար որոշակի ծրագրերի կամ ուսումնասիրությունների իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում ստանալու և վերլուծելու համապատասխան տվյալները, սակայն, հիշյալ կարգավորման պայմաններում պետությունը, օրինակ, ստիպված է լինում այդ տվյալները ձեռք բերելու համար ստանալ իր իսկ կողմից հիմնադրված կամ իր մասնակցությամբ կազմակերպության համաձայնությունը, ինչը հաճախ, պայմանավորված այդ կազմակերպությունների մեծաթիվ լինելու	արդյունքում, ապա «հրապարակայ ին» բառը փոխարինվել է «ոչ գաղտնի» բառով:	

			հանգամանքով, բարդ և ժամանակատար գործընթաց է: Նշվածով պայմանավորված՝ գտնում ենք, որ հիշյալ սկզբունքների համատեքստում հանրային շահն առավել գերակա է պետական մարմնի կամ կազմակերպության, որպես սպառողի տվյալների գաղտնիության պահպանման շահից, ուստի առաջարկվում է քննարկվող նախագիծը լրացնել նոր դրույթով, այն մասին, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված, ինչպես նաև 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններին առնչվող՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկատվությունը հրապարակային է և ենթակա է տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնավորապես՝ առաջարկվում է «էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացումներ: Հաշվի առնելով վերոնշյալ առաջարկությունը՝ 1) հոդվածը լրացնել նոր 1-ին և 2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝ «1) 4-րդ մասում «գաղտնի» բառից հետո		

			լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4.1-ին կետով նախատեսված տեղեկատվության» բառերը, 2)լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս. «4.1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված, ինչպես նաև 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններին առնչվող սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկատվությունը ոչ գաղտնի է և ենթակա է տրամադրման օրենսդրությամբ սահմանված կարգով:»:		
			2) Նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
			3)Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածի 5-րդ մասում» բառերը փոխարինել «հոդվածում» բառով,	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով նախագծի 1-ին հոդվածում լրացվող նոր կետերը, նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումն առաջարկում ենք վերանայել, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ մասերը համարակալել որպես 3-րդ և 4-րդ մասեր: Միաժամանակ նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի ««դ» կետի» բառերից առաջ լրացնել «5-րդ մասի» բառերը, իսկ «նշանը» և «նշանով» բառերից առաջ՝ «կետադրական» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ «2) լրացնել նոր «ե» կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.» ձևակերպումը առաջարկում ենք փոխարինել «4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.» ձևակերպմամբ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը և հաշվի առնելով այն, որ Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, առաջարկում ենք 2-րդ հոդվածը լրացնել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերնագրով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավական ակտը» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, այն է. «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ.»:	փոփոխություն:	
«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 42-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.1-ին մասում առաջարկում ենք մասի համարակալումը տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված պահանջը, համաձայն որի. «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:»:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ ջրային օրենսգրքի 42-րդ հոդվածում լրացվող 3. 1-ին մասում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 42-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում կիրառված «կետով»	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ ջրային	Ընդունվել է:

			բառն առաջարկում ենք փոխարինել «մասով» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է. «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:»:	օրենսգրքի 42-րդ հոդվածում լրացվող 3. 1-ին մասի երկրորդ նախադասությունում «կետով» բառը փոխարինվել է «մասով» բառով:	
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը և հաշվի առնելով այն, որ Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը բացակայում է, առաջարկում ենք 2-րդ հոդվածը լրացնել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերնագրով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «իրավական ակտը» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, այն է. «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ.»:		